



Ուղղանյունանիստ


Այստեղ ներկայացված պատկերը կոչվում է ուղղանկյունանիստ: Ի՞նչ առարկաներ ունեն այդ ձևը: Այս հարցին տարբեր պատասխաններ կարող են տրվել: Մեկը կասի՝ Ժամանակակից բազմահարկ շենքը, մի ուրիշը՝ աղյուսը, երրորդը՝ տիկնիկի տուփը: Եվ նրանք բոլորն էլ իրավացի կլինեն, քանի որ ուղղանկյունանիստը երկրաչափական պատկեր է, որն արտացոլում է այդ առարկաների ձևը որոշող հիմնական հատկությունները:

Հիշի՛ր

Ուղղանկյունանիստի բոլոր նիստերը ուղղանկյուններ են:
Ուղղանկյունանիստն ունի 6 նիստ,
8 գագաթ, 12 կող:



Ուղղանկյունանիստը կազմված է վեց ուղղանկյուններից (նիստերից), նիստերի կողմերը կոչվում են **ուղղանկյունանիստի կողեր**, իսկ նիստերի գագաթները՝ **ուղղանկյունանիստի գագաթներ**: Ուղղանկյունանիստի հանդիպակաց նիստերն իրար հավասար են:



Ուղղանկյունանիստի ստորին (կամ վերին) նիստի երկարությունը և լայնությունը կոչվում են նաև **ուղղանկյունանիստի երկարություն և լայնություն**. նրանց ուղղահայաց կողը կոչվում է ուղղանկյունանիստի **բարձրություն**:

Ուղղանկյունանիստի երկարությունը, լայնությունը և բարձրությունը ունեն ընդհանուր անվանում՝ ուղղանկյունանիստի **չափումներ**:

Այն ուղղանկյունանիստը, որի բոլոր կողերն իրար հավասար են, կոչվում է **խորանարդ**: